# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիտակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիտակ, (091)475038, ditak.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 13

## ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի պահանջներով

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Դիտակ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակը 6, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԶԳԱՆՈՒՇ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՎՍԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզի Դիտակ համայնքի ավագանու

«09»«դեկտեմբեր» 2015թվականի թիվ13-Ն որոշման

ԴԻՏԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ,

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը-6

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 160000 |

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար/1.2-1/ | 1 | 100000 |
| գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-1/ | 1 | 80000 |

ՏԵԽՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| | | |
|---|---|---|
| օպերատոր | 1 | 80000 |
| վարորդ | 1 | 80000 |
| հավաքարար | 1 | 80000 |
| պահակ | 1 | 80000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Է.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիտակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիտակ, (091)475038, ditak.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 14

## ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Դիտակ համայնքի 2016թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԶԳԱՆՈՒՇ

2.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

3.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ

4.ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

5.ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՎՍԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ՍՐԱՊՈՅԱՆ

Հավելված

Դիտակ համայնքի ավագանու

«09»«դեկտեմբեր» 2015թ. թիվ 14-ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով « Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Դիտակ համայնքի 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ոչ հիմնական շինություն) տեղադրման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է ՝ հիմնական օբյեկտների համար

1) Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ

2) Սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա) 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար-15000դրամ

բ)501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար-25000դրամ

գ)1001-ից և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 25000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3)մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ

4)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ՝շինարարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի ) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտա չափերն ընդլայնող այլ կառույցների( այդ թվում

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է 2500դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է `

1)ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինության ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 3000դրամ

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ:

5.Համայնքի տարածքում բացօթյա վաճառքի կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է`

1) գազի և վառելիքաքսայուղային նյութերի համար ընթացիկ տարվա համար 150000դրամ

2)գյուղատնտեսական մթերքների համար յուրաքանչյուր օրվա , քմ -ի համար 250 դրամ

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 500 դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար սահմանել 3000 դրամ:

2.Տեղական կառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու և վարձակալական հիմունքներով տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 500 դրամ:

3.Համայնքի աղբահանության վճար սահմանել մեկ շնչի հաշվով ամսեկան 10 դրամ:

1,2,3 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

Աշխատակազմի քարտուղար՝ [signature] Է.Հովհաննիսյան